

62 91

ՄՈԼՈՑՈՎ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՁԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՎԱՋՈՒՄՆԵՐԸ
ՅԵՎ
ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929

3KП13

У-86

3K013

Մ-86

16

ՄՈԼՈՏՈՎ

25 AUG 2005

1008
38684

4036


ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

ՅԵՎ

ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԸՆԿ. Մոլոտովի գեկուցումը Մոսկվայի մահկուս.
17-րդ կոնֆերենցիայում



920

4155



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929

6291

10684

ՊԵՏՏՐՈՍԻ ԻԻ ՏՊԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
Հրատ. № 910 Պ. № 332
Տիրաժ 3000
Դրանկավար № 1791 (բ.)

Ընկերներ,

Նահանգական 17-րդ կուսկոնֆերենցիան գու-
մարվել է կուսակցական 15-րդ համագումարից ավելի
քան մեկ տարի հետո: Անցած այս ժամանակաշրջանը
բավականաչափ հնարավորություններ է տալիս մեզ
կուսակցության 15-րդ համագումարի հիմնական դիրեկ-
տիվները և նրանց կիրարկման արդյունքները գնահատե-
լու համար: Դեռևս 15-րդ համագումարումն եր, վոր ընդ-
գծվեցին ներկա ժամանակաշրջանի միջազգային և ներ-
քին կացության բացառիկ դժվարությունները: Չնա-
յած դրան, և հետագարձ հայացք նետելով դեպի առ-
ցյալը, մենք տեսնում ենք, վոր Խորհրդային Միության
բանվոր դասակարգի դիրքն այդ ժամանակամիջոցում
զգալիորեն ամրացել է, և մենք մոտեցել ենք մեր չե-
կրում սոցիալիզմ կառուցելու արժանատի և խնդիրնե-
րի լուծմանը: Նայենք, ուրեմն, ամենից առաջ միջազ-
գային այն պարագային, վորի պայմաններում է, վոր
այս ժամանակամիջոցում տեղի յե ունեցել Խորհրդա-
յին Միության զարգացումը:

ԿԼՊԻՏԱԼԻԶՄԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՆԵՐԿԱ ԵՏԱԳԻ ՅԵՎ ԽՍՀՄ
ԵՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՍԻՆ

Կոմիտեների 6-րդ կոնգրեսին անցյալ տարվա
աշնանը հանրագումարի բերեց հետպատերազմյան
շրջանի համաշխարհային կապիտալիզմի զարգա-

484-91



ցումը: Այդ 6-րդ կոնգրեսում յետ նշեցի այն հանգամանքը, վոր վերջին տարիների ընթացքում համաշխարհային կապիտալիզմն զգալի հաջողութուններ ե ունեցել և ընդհանուր առմամբ գերազանցել ե իր մինչպատերազմյան մակարդակը: Միջազգային ռեֆորմիզմի աջակցությամբ բուրժուազիան վորոշ հաջողութուններ ե ձեռք բերել, և չեթե առանձին չերկրներում (որինակ՝ Անգլիայում) կապիտալիզմը դեռևս վոչ մի կերպ չի կարողանում հասնել մինչպատերազմյան գծին, ապա մի շարք այլ չերկրներում (մանավանդ՝ ՀԱՄՆ և Ֆրանսիայում) տեղի չե ունեցել կապիտալիզմի եկոնոմիկայի հետագա աճումը: Դրա հետ միասին 6-րդ կոնգրեսը նշեց, վոր կապիտալիստական ռացիոնալացման ուժեղացումը, նոր և ուժեղ կարտելներ և տրեստների ստեղծումը, կապիտալիստական կազմակերպությունների ավելի և ավելի ուժգին միաձուլումը բուրժուական պետական սխտեմի հետ վոչ մի չափով չի վիճակի չե հարթելու այն բոլոր հակասությունները, վոր կան կապիտալիստական զարգացման մեջ:

Անցած տարվա դեպքերը գալիս են լիովին հաստատելու կապիտալիզմի զարգացման այս գնահատության ճշտությունը: Ներքին դրության տեսակետից՝ կապիտալիստական չերկրների խոշորագույն մասում ամենաբնորոշ մոմենտն ե հանդիսանում բազմաթիվ միլիոն բանվորներ ընդգրկող գործազրկության աճումը: Մեծահարուստ կապիտալիստական չերկրում— ՀԱՄՆ հանգնեցրում— 1923 թվին արդյունաբերության մեջ զբաղված չուրաքանչյուր հարյուր բանվորից միայն ութսուն հինգն ե, վոր աշխատանք ունի այժմ (1928

թվին): Այս նշանակում ե, վոր հինգ տարի առաջ գործ ունեցող չուրաքանչյուր հարյուր բանվորից 15-ն այժմ անգործ են մնացել: 3—4 միլիոն գործազուրկներից վոչ պակաս գտնվում ե հենց սոսկ Հյուսիսային Ամերիկայում: Կապիտալիստական այլ չերկրներում ես գործազրկությունը վիթխարի չափերի չե հասնում: Գերմանիայում և Անգլիայում գործազուրկների թիվն զգալիորեն աճել ե և այդ չերկրներից չուրաքանչյուրում հասնում ե արդեն մեկ և կես— չերկու միլիոնի: Հազվադեպ բացառությամբ (Ֆրանսիա) գործազրկության հարցը շարունակում ե գնալով ավելի և ավելի սրվել նաև ուրիշ չերկրներում:

Կապիտալիզմի աճող ճգնաժամի ծանրությունը հենց գործազրկության աճման այդ պրոցեսում ե, ահա, վոր գտնում ե իր առավելապես ցայտուն արտահայտություններից մեկը:

Մյուս կողմից՝ դրա հետ անքակտելիորեն կապված ե նաև մասսաների ամող ձախացման փաստը յեվ պրոլետարական ռաժման աշխուժացումը: Անցած տարվա մի շարք փաստերը գալիս են վկայելու, վոր հերավի գոյանում և աճում են հեղափոխական նոր ընդվզումի տարրերը բանվորական շարժման մեջ: Այնպիսի դեպքերն, ինչպես, որինակ՝ Լոձի մանածագործների գործադուլի վերածվելն ընդհանուր գործադուլի, վորպիսին ընդգրկեց մոտ 150 հազար բանվորներ, այլև՝ այնպիսի փաստերը, ինչպես Ռուսի դեպքերը և մի շարք խոշորագույն գործադուլները Գերմանիայում, Ֆրանսիայում և Չեխո-Սլովակիայում և այլն,— գալիս են վկայելու հեղափոխական այն հրակայական ուժերի մասին, վորոնք կուտակվում են

Յեվրոպայի բանվոր դասակարգի խորքերում: Ավելի և ավելի սիմպատոմներ են յերևում, վորոնցից ալլևա ակընհայտ է, վոր բանվորական շարժումը Յեվրոպայում պաշտպանողական կռիվներ մղելու հետ զուգընթաց՝ անցնում է արդեն մի նոր աստիճանի, տեղ-տեղ նուգնիսկ հակառակ սոցիալ-դեմոկրատիայի և ռեֆորմիստական արհմիությունների կողմից թափած ջանքերի՝ բացահայտորեն հարձակողական բնույթ ստանալով:

Այսպես են, ահա, կապիտալիստական ստաբիլիզացիայի ներկա ետապի ներքին հակասությունները ներկայացնող միքանի կարևորագույն ցուցանիշները:

Կապիտալիզմից կախված գաղութային չերկրորդների վերաբերմամբ ևս պետք է նշել հեղափոխական մի շարք հսկայական հնարավորություններ, այն չերկրորդների, վորոնք կարող են արդեն իսկ ամենամոտիկ ապագայում ազդու կերպով հիշեցնել իրենց գոյության մասին: Ճիշտ է, չինական հեղափոխությունը պարտություն կրեց 1927 թվականին, սակայն ամեն ինչ վկայում է, վոր 1926—27 թ. թ. չինական հեղափոխության առջև ծառացած պրոբլեմներն անլուծելի չեն մնացել և վոր այդ հանգամանքն իր արտահայտությունն է գտնելու Չինաստանի ժողովրդական հեղափոխական շարժման մի նոր պոռթկումի մեջ: Չինաստանի ազգային միասնականացման խնդիրը դեռևս անլուծելի չէ մնացել:

Չինաստանում տիրող դրությունը հիշեցնում է մեզ այն դրությունը, վոր մենք ապրում ելինք 1905 թվին, կրած պարտությունից հետո: Այդ նշանակում է, վոր բանվորների և գյուղացիների հեղափոխական շարժման մի նոր վերելքը Չինաստանում միանգամայն

անխուսափելի չէ և ապա՝ վոր հեղափոխական այդ նոր մակընթացությունը հզորագույն հարվածն է հասցնելու ռազմա-կալվածատիրական բուրժուական այն բուկին, վորը ներկայումս իշխանության գլուխ է կանգնած և ապա՝ իմպերիալիզմին, վոր փաստորեն իշխում է Չինաստանում:

Ահրաժեշտ է նշել նաև Հնդկաստանում տեղի ունեցող հեղափոխական շարժումը, վորպիսին շարունակում է վտաքի հանել բանվորների և գյուղացիների նորանոր խավերը: Այդ մասին են վկայում առանձնապես վերջին ժամանակներս չգաղարող հեղափոխական բնույթ ունեցող ընդհարումները Բոմբեյում և գյուղացիական մասսաների հեղափոխական շարժումը: Այսպիսով, Արեւիելում հեղափոխական ուժեր են հասունանում իմպերիալիզմի դեմ:

Ինչ վերաբերում է այն փոխհարաբերություններին, վոր գոյություն ունեն իրենց իսկ կապիտալիստական չերկրների միջև, ապա այստեղ ևս փաստերը զալիս են վկայելու, վոր հակասությունները գնալով աճել և սրվել են: Այդ է վկայում թե սպառազինությունների և թե ռազմական բյուշենների աճումը: Չնայած խաղաղարարության գոյությանն Ազգերի Լիգայի աշխատանքներում և չնայած պատերազմից հրաժարվելու վերաբերմամբ Կելլոգի համաձայնագրի ստորագրելուն, — կապիտալիստական չերկրների բանակների ռազմական բյուշենները ներկայումս իսկ արդեն զգալիորեն գերազանցել են մինչպատերազմյան չափերը և դեռ շարունակում են ավելի և ավելի աճել ու բարձրանալ:

Նորանոր ռազմա-քաղաքական դաշինքներ են

կնքվում: Իմպերիալիստական չերկու հիմնական և գըլխավոր հսկաների—Անգլիայի և ՀԱՄՆահանգների պայքարը՝ քանի գնում, այնքան ավելի սուր բնավորութունն է ստանում:

Իմպերիալիստական պատերազմների և ԽՍՀՄ վրա բացահայտ հարձակում գործելու վտանգն ավելի և ավելի աւելտուալ է դառնում և բղխում է աչն հանգամանքից, վոր չնայած կապիտալիստական եկոնոմիկայի ասպարիդում ձեռք բերած հաջողութուններին՝ կապիտալիզմի ճգնաժամն, այնուամենայնիվ, քանի գնում, այնքան ավելի յե խորանում, և ավելի ու ավելի յե խարխիւում կապիտալիստական տիրակալության բովանդակ սխտեմը: Լիակատար պարզորոշությամբ նշել է այդ հանգամանքը Կոմինտերնի վերջին կոնգրեսսը:

Վերոհիշյալ բոլոր փաստերը գալիս են բնորոշելու միջազգային ամբողջ այն պարագան, վորի պայմաններում է գտնվել այդ ժամանակաշրջանում ԽՍՀ Միությունը:

Այսպիսով՝ միջազգային ընդհանուր պարագայից բղխում են հետևյալ հիմնական յեղրակացությունները:

Նախ և առաջ՝ Խորհրդային Միությունը հետագայում ևս անշեղ և համառ կերպով պետք է անցկացնի իր խաղաղության քաղաքականությունը, այդ հիման վրա մոբիլիզացիայի յենթարկելով ԽՍՀՄիության շուրջը բոլոր յերկրների աշխատավորական լայն մասսաները:

Յերկրորդ՝ մենք պետք է կարողանանք ըստ ամենայնի ոգտագործել առևտրական հարաբերությունները լավացնելու բոլոր հնարավորությունները: Դրանով շահագորդված է վոչ միայն ԽՍՀՄիությունը, այլ

և առանձնապես շուկաների կարիք զգացող կապիտալիստական պետությունները:

Յերրորդ՝ մենք առավել ևս պետք է ամրացնենք և ուժեղացնենք մեր յերկրի պաշտպանությունը՝ ավելի մեծ ուշադրությամբ և հոգատարությամբ շրջապատելով մեր Կարմիր բանակը:

Այսոր, մեր Կարմիր բանակի 11-րդ տարեդարձի որը, մենք առանձնապես լավ պետք է հիշենք ԽՍՀՄիության դեմ իմպերիալիստական նոր հարձակումներ կատարելու վտանգի մասին:

Կիրարկելով այդ քաղաքականությունը, մենք ամրացրած կլինենք ԽՍՀՄիության միջազգային դերը վորպես համաշխարհային պրոլետարական հեղափոթության առաջամարտիկի:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՄԵՐ ԱՌԱՋԻՎԱՆՆԵՐԸ

15-րդ կուսհամագումարից հետո անցած ժամանակաշրջանում մենք խոշոր հաջողություններ ենք ձեռք բերել յերկրի ինդուստրիացման կուրսը կիրարկելու գործում: Այդ մասին է վկայում մեր արդյունաբերության զգալի աճումը: Ինչպես ցույց տվեց անցած 1927—28 թվականը, մենք շարունակում ենք արագ տեմպով առաջ գնալ արդյունաբերության ծավալման ասպարիդում, գերազանցելով մեր բոլոր յենթադրությունները: Անցած տնտեսական տարում մեր արդյունաբերության արտադրանքը՝ մեր յենթադրած 16 տոկոսի փոխարեն՝ աճել է գրեթե 23 տոկոսով: Դրա հետ միասին բացառիկ աշխատությամբ պարզվել է նաև մեր

ծանր արդյունաբերութեան հետամնացութեանը: Մենք անգամ իսկ այժմ դեռ չենք հասել մետաղի—թուջի և պողպատի արդյունաբերութեան մինչպատերազմյան մակարդակին: Այստեղ ինչպես ել վոր լինի, մենք պետք է կարողանանք հենց մոտակա տարիներին վճռական բեկում առաջացնել:

Տնտեսական տարվա խոշոր հաջողութիւններն ից մեկն ել այն փաստն է, վոր աշխատանքի արտադրողականութեան աճումն առաջին անգամն է, վոր ավելի բարձր յեղալ, քան թե աշխատավարձի աճումը: Դրա հետեանքով մենք կարողացանք ինքնարժեքի իջեցում ունենալ մոտավորապէս հինգ և կես տոկոսով:

1928—29 թվականի տնտեսական պլանը պետք է ապահովի մեր արդյունաբերութեան հետագա զգալի աճումն ու զարգացումը: Ինդուստրիացման կուրսի կիրարկման ասպարիզում կարեւորագուէն հաջողութիւն պետք է համարել արդյունաբերութեան մեջ կատարվող հիմնական շինարարութեան հետագա զգալի աճումը: Անցյալ տարվա համեմատութեամբ այստեղ մենք մի քաջ ևս առաջ ենք գնում, բարձրացնելով այդ շինարարութիւնը նորից մի 30 տոկոսով: Այս տարի զգալիորեն ուժեղացված է ծանր արդյունաբերութեանը հատկացվելիք ուշադրութիւնը: Նրա աճման տեմպը յենթադրված է բարձրացնել 25 և կես տոկոսով՝ թեթեւ արդյունաբերութեան աճման տեմպի համեմատութեամբ:

Ներկա տնտեսական տարվա դժվարագուէն առաջադրութիւնն է հանդիսանում հետագայում ևս ինքնարժեքը 7 տոկոսով իջեցնելու խնդիրը: Այս գործը կատարված է աշխատանքի արտադրողականութիւնն

անպայմանորեն 17 տոկոսով բարձրացնելու հետ: Յեկ սակայն արդյունաբերութեան ասպարիզում արդեն իսկ ձեռք բերված հաջողութիւնները չի կարելի և չպետք է չափազանցնել:

Հազվադեպ բացառութեամբ (քարածուխ և ճակնդեղի շաքար) ԽՍՀՄ-իութեան արտադրութեան բաժինը համաշխարհային արտադրանքի մեջ դեռևս նույնիսկ մինչպատերազմյան բաժնից ել ցածր է: Թեպետ վերջին տարիների ընթացքում մենք անշեղորեն և շարունակ բարձրացնում ենք մեր արտադրանքի տոկոսը համաշխարհային արտադրութեան մեջ, բայց և այնպէս այդ տոկոսն ինքնին դեռևս չափազանց փոքր է ցածր տոկոս է:

Այս իսկ պատճառով մեզ համար հսկայական նշանակութիւն ունի մեր տնտեսութեան զարգացման հնգամյա պլանի հետ կապված խնդիրների քննութիւնը համամիութենական առաջիկա կուսակցական կոնֆերենցիայում և խորհուրդների համագումարում: Առայժմ մենք դեռ չունենք կառավարութեան կողմից հաստատված հնգամյա պլան: Մենք ունենք միայն ԳԺՏՊ-ի նախնական և մոտավոր ուրվագիծն արդյունաբերութեան վերաբերմամբ:

Այդ հնգամյա պլանի միջանի ելական նշանակութիւն ունեցող թվերը հետագայում յետ կնշեմ: Այստեղ բնորոշ հանդիսանում է այն փաստը, վոր առաջներում ուրվագծված հնգամյա բոլոր պլաններն ել չեմ ելին մնում կյանքից: Այսպէս, որինակ, 1926 թվականին սլակված հնգամյա պլանն իրականում զգալիորեն գերազանցված էր: Հնգամյա այն պլանով արդյունաբերութեան աճումը 1926—27 թվականի համար չենթա-

դրվում եր 17 տոկոսի չափով, մինչդեռ փաստորեն այդ տոկոսը հասավ գրեթե 20-ի: Նույն այդ պլանով 1927—28 թվականի համար արդյունաբերության աճումը յենթադրվում եր 12 տոկոսից շատ քիչ ավելի չափով: Մինչդեռ փաստորեն, ինչպես հայտնի յե, արդյունաբերությունն այդ տարվա ընթացքում զարգացավ գրեթե կրկնապատկված թափով, հասնելով մոտավորապես 23 տոկոսի: Այս տարվա համար անցյալ հնգամյա պլանով նախատեսված աճումը մոտավորապես 10 տոկոս եր, մինչդեռ ներկա մեր յենթադրությունները նախատեսում են մոտավորապես 22 տոկոսի հասնող աճում:

Այս հանգամանքը ցույց ե տալիս, վոր սոցիալիստական տնտեսություն մեջ հսկայական հնարավորություններ կան արտադրողական ուժերի աճման ե ծավալման համար, ե վոր անգամ իսկ մինչև վերջին ժամանակներս մենք բնավ ի վիճակի չենք յեղել լիակատար չափով հաշվի առնելու այն բոլոր հնարավորությունները, վոր յեղել են մեր տրամադրության տակ:

Ինչպիսի հնարավորություններ կան ԳԺՏՊորհի այժմյան հնգամյա պլանում: Այդ հարցին պատասխան աված լինելու համար այստեղ կհիշատակեմ միքանի առավելապես կարևոր թվեր:

Հնգամյա պլանն ուրվագծում ե արդյունաբերության արտադրանքի աճումը 268 տոկոսով (1927 թվականից), այսինքն՝ յերկու ե կես անգամից ավելի չափով, ընդ վորում ծանր արդյունաբերության դժով նախատեսվող աճումը յենթադրվում ե մոտավորապես 321 տոկոսով, այսինքն՝ յերեք անգամից ավելի չափով,

իսկ թեթև արդյունաբերության դժով — 230 տոկոսով, այսինքն յերկու անգամից ավելի չափով: Այս պլանի կենսագործումը նշանակում ե, վոր հնգամյակի վերջում մեր արդյունաբերական արտադրանքը գրեթե յերեք անգամ ավելի բարձր ե լինելու քանակապես, քան թե արդյունաբերության մինչպատերազմյան արտադրանքը: Այս հանգամանքը վկայում ե այն աշխատանքի հոյակապության մասին, վոր մենք դեռևս պետք ե կատարենք արդյունաբերության զարգացման ասպարիզում:

ԳԺՏՊորհի հնգամյա պլանով նախատեսվում ե նաև ինքնարժեքի իջեցում 32 տոկոսով ե վաճառագների իջեցում 24 տոկոսով: Այդ նշանակում ե, վոր բանվոր դասակարգի ուժերի հսկայական լարումն ե պահանջվելու՝ առաջադրված ծրագիրն իրագործելու համար:

Հիշատակեմ այստեղ նաև այն տվյալները, վոր անմիջականորեն վերաբերում են բանվոր դասակարգի դրություն: Այսպես, որինակ, հաժաձայն հնգամյա պլանի՝ բանվոր դասակարգի քանակական կազմն ավելանալու յե 740 հազարով, ոեալ աշխատավարձը — 56 տոկոսով, չուրաքանչյուր բանվորին հասանելիք բնական լի տարածության նորմայի տպահովությունը 5 ե վեց տասերորդական քառակուսի մետրից հասնելու յե մինչև 6 քառ. մետր, վերջապես, այս հնգամյակի ընթացքում մեր ամբողջ արդյունաբերությունը լիովին պետք ե անցնի յոթժամյա բանվորական օրվան: Իսկ այս նշանակում ե, վոր հնգամյա պլանի կենսագործումը կապված ե բանվոր դասակարգի դրության զգալի բարելավման հետ, մի հանգամանք, վոր ավել-

լորդ անգամ ապացուցում է, թե վորքան սերտորեն են կապված իրարու սոցիալիզմի շինարարութան և պրոլետարիատի կենսական շահերը:

Արդյունաբերության զարգացման ասպարիզում մենք վիթխարագույն խնդիրներ ենք դնում մեր առջև: Այդ մոմենտը բացառիկ պատասխանատվութուն է բարդում մեզ վրա և խորհրդային Միության բովանդակ բանվոր դասակարգի վրա՝ տնտեսության ղեկավարության գործի համար: Այժմ մեզ առանձնապես անհրաժեշտ է ուժեղացնել մեր աշխատանքը յերկու ուղղությամբ. առաջինը՝ արդյունաբերության ասպարիզում կատարելիք ռացիոնալացման աշխատանքն ըստ ամենայնի ուժեղացնելու գծով և ապա, չերկրորդ՝ աշխատանքի արտադրողականութունը լիովին բարձրացնելու գծով:

ՌԱՏՈՒՆԱԼԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆԻ ԱՐՏԱԳՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անցած ժամանակամիջոցում մենք արդեն վորոշ հաջողութուններ ձեռք ենք բերել ռացիոնալացման գործի ասպարիզում: Այսպես, մեր նավթարդյունաբերութունն այժմ իսկ արդեն իր խոշորագույն մասով կանգնած է կապիտալիստական առաջավոր չերկրների մակարդակի վրա: Ածխարդյունաբերության ասպարիզում (Դոնբաս) մենք զգալիորեն առաջ ենք անցել աշխատանքների մեքենայացման ուղղությամբ (վորպիսին այս տարի յենթադրված է հասցնել մինչև 32 տոկոսը): Աշխատանքների մեքենայացման տոկոսը, սակայն, այժմ ել արդեն զգալի չափով Կերազանցում

էԱնգլիայի ածխարդյունաբերության համապատասխան տոկոսին (20 տոկոս): Մեզանում հաջողութուններ կան նաև անլնդհատ հոսանքով (կոնվեյերով) աշխատանքի դիմելու գործում: 80-ի մոտ թվով ձեռնարկութուններ ունենք, վորոնք այս կամ այն չափով արդեն իսկ աշխատանքի այդ սխտեմն են կիրառում, ել չխոսելով այն ձեռնարկութունների մասին, վորտեղ առաջներում ել այդ բանն անխուսափելիորեն կապված եր արտադրության պրոցեսին:

Իսկ ինչ վերաբերում է աշխատանքի արտադրողականությանը, ապա այս տեսակետից ներկայումս տիրող դրությունը դեռևս շատ հեռու չէ բարենպաստ համարվելուց: Տնտեսական ընթացիկ տարվա առաջին չեռամսյակը աշխատանքի արտադրողականության շատ ավելի պակաս բարձրացում օվեց մեզ, քան թե այդ ծրագրված եր պլանով, այն է—12 տոկոս՝ յենթադրված 17 տոկոսի փոխարեն: Այս կապակցությամբ առիթ է հանդիսանում առանձնապես նշելու աշխատանքային կարգապահության անմխիթար վիճակը մեր միջանի ձեռնարկութուններում: Աշխատանքային կարգապահության բարձրացման խնդիրը ներկայումս խոշորագույն նշանակութուն է ստանում և անհրաժեշտ առիթ է դարձել, վոր կուսակցության Կենտկոմը հատուկ դիմում ուղղի բոլոր կուսկազմակերպութուններին: Փաստերը վկայում են, վոր աշխատանքային կարգապահության նվազումն իր արտացոլումն է ստանում՝ մեկ կողմից՝ վարչատեխնիկական ղեկավարության վորոշ թուլացմամբ, և մյուս կողմից՝ աչտեղ արտահայտվում է այն միանգամայն անբավարար ուշադրությունը, վոր ցույց են տալիս դեպի այդ գործը

մեր արհեստակցական, ինչպես նաև կուսակցական կազմակերպությունները: Բանվորների ճնշող մասսան, սակայն, ամենագլխաւորն և ուշադիր կերպով ե վերաբերվում կուսակցութեան և խորհրդային իշխանութեան բոլոր աչն կոչերին, վորոնք վերաբերում են աշխատանքի արտադրողականութեան բարձրացմանը: Ծայրաստիճան թույլ ե կազմակերպված նաև բանվորական նոր խավերի մեջ սոցիալիստական դաստիարակչական աշխատանք կատարելու գործը:


Սակայն շատ հաճախ ձեռնարկութեաններում գոյութիւն են ունենում վորոշ խմբակներ կամ առանձին տարրեր, վորոնք կազմալուծիչ ազդեցութիւն են գործում ամբողջ արտադրական աշխատանքի և պարագայի վրա: Դրանով արտահայտվում ե նաև աչն, վոր վերջին տարիների ընթացքում մեր արդշունարերութեան մեջ ե անցել նոր բանվորների մի խոշոր թիւ: Այսպես, որինակ՝ վերջին հինգ տարվա ընթացքում մեր ձեռնարկութեանների մեջ հենց միմիայն ԳԺՏՈՐհին լենթակա արդշունարերութեան գծով ընդունվել ե մեկ միլիոն հիսուն և չոթ հազար նոր բանվոր: Դրանց մեջ քիչ չեն և աչնպիսիները, վորոնք կապված են գյուղին, և աչդ գյուղի շահերն, ահա, դրանց մոտ շատ հաճախ դեռ իշխում են սոցիալիստական ինդուստրիացման շահերի վրա:

Այս ամենը հարկադրում ե մեզ ընդգծելու մի շարք փաստեր, վորոնք վկայում են աշխատանքային կարգապահութեան բացահայտ քայքայման և բանվորների առանձին խմբերի կողմից արտադրութեան մեջ դեպի իրենց պարտականութեաններն ունեցած միանշանակ դաստիարակչական վերաբերմունքի մասին:

Արհմիութեանների խնդիրն ե հանդիսանում բանվորների նյութական և կենցաղային շահերի լիակատար պաշտպանութիւնը: Նրանց խնդիրն ե հանդիսանում նաև բանվորների մասնակցութեան ըստ ամենայնի ուժեղացումն ինչպես արդշունարերութեան կառավարման գործի, աչնպես ել և տնտեսական մարմիններում բոլորակատար խեղաթուրումների դեմ պայքարելու գործի մեջ, բանվոր-գյուտարներին ոգնելու և աշակցելու գործերում և աչն: Դրա հետ միասին՝ բանվորների սոցիալիստական դաստիարակութեան գործը ներկայիս պայմաններում կապված ե աչն համառ և հարատե պայքարին, վոր մղվում ե հանուն աշխատանքային կարգապահութեան ամրացման, հանուն գործալքումների վերացման, դեպի սարքավորումը, գործիքները և մեխանիզմներն ունեցած անփութ և անզգուշ վերաբերմունքն արմատախիլ անելու համար և հանուն աչնպիսի մթնոլորտի ստեղծման մեր ձեռնարկութեաններում, վորի պայմաններում գործալքողներն ու արտադրական կազմալուծիչները բարոյապես դատապարտված զգային իրենց և մեկուսացված պրոլետարական շրջապատի մեջ: Այս տեսակետից մեր արհեստակցական, ինչպես նաև կուսակցական կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքը բնավ չի կարող իր կոչման բարձրութեան վրա կանգնած աշխատանք համարվել:

Աշխատանքային կարգապահութեան գործը մեր ձեռնարկութեաններում բացահայտ տենդենց ունի դեպի ել ավելի վատթարանալը: Գործալքումներին գուլընթաց՝ հատկապէս արդշունարութիւն պետք ե դարձնել նաև աչնպիսի փաստեր, ինչպես, որինակ՝ աշ-

4891-91 4036 1008 38684



խատանքից ուշանալը, աշխատանքի ժամերին քնելը, հարբած դրուժյամբ արտադրութեան վայրում յերևալը և այլն: Մեր խոշոր ձեռնարկությունների վերաբերյալ բազմաթիվ փաստեր կարելի չեն հիշատակել աչտեղ, փաստեր, վորոնք վկայում են, վոր այդ տեսակետից դրությունն այնքան ել նպաստավոր և ապահով չեն Առանձին ղեկավարում բանը հասնում ե նույնիսկ մինչև բանվորների առանձին խմբերի մեջ առաջացած ազնայտ և բացորոշ քայքայման: Այսպես, որինակ՝ ըստ «Տարգովո-Պրոմիշլեննայա Գազետայի» մինչ այժմ չհերքված հաղորդագրութեան — «Կրասնիյ Պաստովչիկ» գործարանում (Մոսկվա), վորը դեռ նոր ել կառուցված ե, բանվորական առանձին խմբերի մեջ ամենակատարչալ և ծայրահեղ քայքայումն ե տիրում: Աշխատանքային կարգապահութեան ամենակոպիտ խախտումները, ինչպես, որինակ՝ արտադրութեան վայրում հարբած դրութեամբ յերևալը, սխտեմատիկաբար կատարվող գործալքումները և այլն, — սովորական և առողջա յերևույթ են դարձել գործարանում: Բանվորների խոշոր մասը նախկին տնայնագործներից ե, վորոնք և մեծ դժվարութեամբ են չենթարկվում վերադաստիարակման:

Այս, սակայն, վերջին ժամանակներխ բազմաթիվ որինակներից մեկն ե: Իհարկե, այս չի կարող վերաբերել բանվորների բովանդակ մասսային, և սակայն վերոհիշյալ դրությունը հանդուրժելի չե նաև բանվորների թեկուզ հենց առանձին խմբերի վերաբերմամբ:

Առանձնապես պետք ե նշենք այն փաստը, վոր աշխատանքային կարգապահությունը խախտելու մեջ

շատ հաճախ մեղավոր են հենց իրենք կոմունիստները և կոմյերիտականները: Մինչդեռ կոմունիստների և կոմյերիտականների առաջագույն պարտականութեանն ե հանդիսանում՝ անկուսակցական առաջավոր բանվորների հետ միասին — առաջամարտիկներ լինել աշխատանքային կարգապահութեան բարձրացման գործում և առավելապես կուլտուրական և արտադրականորեն-որինակելի բանվորի տիպարն ստեղծել:

Հատկապես պետք ե ասել աշխարհապահութեան բարձրացման անհրաժեշտութեան մասին ինժեներատեխնիկական պերսոնալի մեջ: Այստեղ ես դրությունը շատ հեռու չե նպաստավոր լինելուց: Մյուս կողմից՝ բացահայտորեն անբավարար ե նաև սպեցալիերութեան, ինչպես նաև ինժեներատեխնիկական պերսոնալի հանդեպ պարզապես խուլիզանական յեղույթների դեմ կռիվու գործը: Այս բոլոր փաստերն ինկատի առնելով, ստիպված ենք կրկին անգամ պնդել, վոր հիմնավոր անհրաժեշտ ե բարոյական այնպիսի մի պարագա, այնպիսի մի մթնոլորտ ստեղծել բանվորական միջավայրում, վորպիսին այլևս անհնարին դարձնել խուլիզանների և արտադրությունը կազմալուծողների գոյությունն ու ներկայութեանը մեր ձեռնարկութեաններում:

Առավել ես այժմ անհրաժեշտ ե մատնանշել այդ վորովհետե մեզ մոտ արտադրութեան մեջ նվազում ե ճարտարապետական-տեխնիկական պերսոնալի տեսակարար կշիռը: Այսպես, որ, 1927 թ. սկզբի համեմատութեամբ ճարտարապետների և տեխնիկների թիվը բանվորների ընդհանուր քանակի հանդեպ 1928 թ. վերջին իջել ե համարյա 17 տոկոսով: Այս բոլորը

ցույց ե տալիս, վոր անհրաժեշտ ե համառ աշխատանք կատարել բանվորական մասսաների շրջանում արտադրութեան մեջ ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելու ճարտարապետական-տեխնիկական պերսոնալի համար և ամեն կերպ ոժտանդակելու այդ միջավայրի այն աշխատավորներին, վորոնք հանդիսանում են դիսցիպլինայի տիրարներ և իսկական կարգապահութիւն են պահանջում ձեռնարկութեան բոլոր աշխատավորներին:

Իվերջո, անհրաժեշտ ե ընդգծել, վոր համաձայն կուսակցութեան վորոշումների (որինակ՝ 11-րդ կուսհամագումարի) տնտեսական հիմնարկներում պետք ե ապահովել միանձնյա ղեկավարութիւնը ձեռնարկութեան բոլոր գործառնական խնդիրներում: Տնտեսական ձեռնարկութեան մեջ արհեստակցական և կուսակցական կազմակերպութիւնների անհրաժեշտ մասնակցութիւնը վոչ մի դեպքում չպետք ե հանգի յեռիշխանութեան (բջիջ, գործարկում և վարչութիւն) վորեւ տարրի առաջացման, վորը կտանի միմիայն ղեկի արտադրութեան աշխատանքների կազմալուծում: Անհրաժեշտ ե դործնականում ուժեղացնել տնտեսավարների և վարչատեխնիկական պերսոնալի պատասխանատվութիւնն ինքնարժեքի իջեցման և աշխատանքային դիսցիպլինայի ուժեղացման վերաբերյալ ղիրեկտիվների կիրառման ամբողջ գործի համար: Դրա հետ միասին անհրաժեշտ ե բարելավել արհեստակցական կազմակերպութիւնների, մասնավորապես արտադրական խորհրդակցութիւնների աշխատանքը՝ համապատասխան ձեռնարկութեան մեջ բանվորների գիտակից և ակտիվ մասնակցութիւնն ապահովելու

համար: Կոմմունիստներն ու կոմյերիտականներն այդ բոլոր միջոցների կիրառման մեջ պետք ե գտնվեն առաջին շարքերում:

ԳՅՈՒԼԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Այժմ յես կանցնեմ գյուղատնտեսութեան խընդրին:

Գյուղատնտեսութեան զարգացման տեմպը վերջին տարիներս յետ ե փնացել ինդուստրիայից: Այդ մասնանշված ե դեռ կուսակցութեան 15-րդ համագումարում: Իրոք, վերջին յերեք տարիներս արդյունաբերութեան արտադրանքն իր արժեքով ավելացել ե 50 տոկոսից ավելի, իսկ գյուղատնտեսութեան արտադրանքը — ընդամենը ինչ-վոր 7 տոկոսով: Այդ բավարար չափով ապացուցում ե գյուղատնտեսութեան և արդյունաբերութեան զարգացման տեմպի տարբերութիւնը: Գյուղատնտեսութեան առանձին ճյուղերի վերաբերյալ վերջին տարիների տվյալները նմանապես ցույց հեն տալիս գյուղատնտեսութեան աճման դանդաղացած տեմպը: Վերջին յերեք տարում անհատական տնտեսութիւնների ցանքերի ամբողջ տարածութիւնն այսպիսով աճել ե 3,7 տոկոսով, յերկրորդ տարին՝ 2,5 տոկոսով և յերրորդ տարին՝ 0,7 տոկոսով:

Այս թվերը ցույց են տալիս, վոր ցանքերի տարածութիւնն անընդհատ աճում ե և, միաժամանակ, աճում ե չափազանց դանդաղ: Սակայն պետք ե 1928 թվի համար առանձնապես հաշիւ առնել ողբերկութաբանական ծայրահեղ աննպաստ պայմանները, վորոնք արտահայտութիւն են կտել ցանքերի տարածութեան

նվազելու մեջ: Պետք է հաշվի առնել նաև այն, վոր այդ տարիներին զգալապես ընդարձակվել է կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունների՝ սոցիալիստական սեկտորի ցանքերի տարածությունը: Բացի դրանից, մեծ նշանակություն ունի այն փաստը, վոր 1928 թ. նույնիսկ հացաբույսերի կուլտուրաների տարածության վորոշ չափով կրճատվելու պայմաններում ընդարձակվել են գյուղացիական տնտեսությունների տեխնիկական կուլտուրաների և խոտաբույսերի ցանքերը: Անասնապահության թվերը նմանապես վկայում են անասունների հիմնական խմբերի (ձի, խոշոր յեղջերավոր անասուն, վոշխար, խոզ) աճումը: Ընդհանուր առմամբ վերոհիշյալ յերեք տարում անհատական տնտեսություններում անասուններն աճել են՝ 6,6 տոկոս, 4,8 տոկոս և 1 տոկոս: Բացի դրանից, մի շարք այլ ցուցանիշներ վկայում են բնավ վոշ գյուղատնտեսության անկումը, այլ պրոգրեսսիվ տարրերի զարգացումն այդ ասպարիզում: Բազմադաշտյան սիստեմին անցնելու խոշոր հաջողությունները, աշնան հերկի ընդարձակումը, տեսակավոր ցանքերի ընդարձակումը, գյուղմեքենաներով ապահովվելը, հանքային պարատացման տարածումն և այլն վկայում են պրոգրեսսիվ տեխնոլոգիաների զարգացման մասին գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսության անկման մասին խոսակցությունները հիմնովին հակասում են այս փաստերին: Նրանք, սակայն, ցույց են տալիս, վոր չքավորական և միջակների ցանքերի նկատմամբ աճման պայմաններում ալթմ ավելի սուր են արտահայտվում այն սահմանափակումները, վոր մենք կիրառում ենք կուլակային տնտեսությունների աճման վերաբերմամբ:

Գյուղի չքավորների և միջակների հիմնական մասսան շարունակում է ընդարձակել իր ցանքերը: Այդ չի կարելի ասել գյուղի վերնախավի մասին: Գյուղատնտեսության անկման մասին լեղոծ խոճապային վայնասունն արտացոլում է կուլակության տրամադրությունները, վորը չի կարող չերազել խորհրդային սահմանափակումների վերացումը գյուղի կապիտալիստական ելեմենտների աճման վերաբերմամբ: Գյուղատնտեսության այդ զարգացումը վկայում է միաժամանակ այն մասին, վոր նրա զարգացման ներկա թափը յերեք չի կարող գոհացում տալ յերկրի արագ ինդուստրիացման շահերին: Անցած և այս տարիների հացամթերման կամպանիայի դժվարություններն այս խնդիրը դնում են բավական սուր կերպով: Մենք պետք է, ինչ էլ վոր լինի, խոշոր բարեփոխումներ կատարենք այս գործում: Դրա հետ միասին խորհրդային իշխանությունը կիրառել է և կիրառում է մի շարք խոշոր ձեռնարկումներ թե չքավորների ու միջակների անհատական տնտեսությունների բարձրացման և թե գյուղի սոցիալիստական սեկտորի ուժեղացման համար:

Անավասիկ այն հիմնական ձեռնարկումները, վորոնք արդեն կիրառվել են ու դեռևս առաջիկայում կիրառվելու չեն գյուղացիական անհատական տնտեսության վերաբերմամբ: 1926 թ. հացամթերման կամպանիայի նախորդակներում վորոշում ընդունվեց գյուղատնտեսական մթերքների գների բարձրացման մասին: Այդ անհրաժեշտ էր, վորպեսզի գյուղացիության շահագրգռվածությունն ուժեղանար հատկապես հացահատիկների տնտեսության բարձրացման գործում: Դրանից հետո կուսակցությունն առաջադրեց բերքատվության բարձրաց-

ման խնդիրը: Դրա հետևանքով այս տարվա ցանքերի կամպանիան դառնում է գյուղացիական ցանքերի բերքատվության մարտական քաղաքական կամպանիա հանուն գյուղացիական ցանքերի բերքատվության բարձրացման: Ջրավոր-միջակ տնտեսությունների աճումը խթանող կարևորագույն ձեռնարկումները միջոցներ են, վորոնք ձեռք են առնված գյուղատնտեսական նոր հարկի հետևանքով: Գյուղատնտեսական նոր հարկի որենքն ուժի մեջ է թողնում այն կետը, վորի համաձայն տնտեսությունների (չքավորներն ու առավել թույլ միջակները) 35 տոկոսը բոլորովին ազատվում են գյուղատնտեսական հարկից:

Միջակների հիմնական մասսայի հարկի չափն ըզգալիորեն թեթևացնում է նոր որենքը: Գյուղատնտեսական հարկի գումարն իջեցված է 50—60 միլ. ռուբլով: Միջակ տնտեսությունների վերաբերմամբ, վորոնք ագրիկուլտուր բարեխալումներ են սացնում, սահմանված են հատուկ արտոնություններ: Բացի դրանից ժամանակից 3 տարի առաջ սահմանված է հարկի նորմաների պահպանումը, վորը կայունություն կմտցնի գյուղացիության տնտեսական հաշիվներում: Գյուղատնտեսության վերելքի չափազանց դանդաղ տեմպը կապված է գյուղացիական տնտեսության ցրվածության և հետաձայնության հետ: Այդ հետաձայնությունը հաղթահարելու արմատական և միակ միջոցը միայն այն կարող է լինել, վոր գյուղացիական տնտեսությունն անցնի խոշոր կոլեկտիվ արտադրության: Այդ պատճառով, լերկրի ինդուստրիացման խնդիրները իրագործումն անքակտելիորեն կապված է գյուղատնտեսության արտադրության, կոոպերացման և կոլեկտիվացման լայն մասսայական աշխատանքի խնդրի հետ:

ԱՄՐԱՅՆԵԼ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳԻՐԷՔԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այդ ասպարիզում մենք արդեն վորոշ հաջողություններ ենք ձեռք բերել: Կոլեկտիվ տնտեսությունների թիվը միայն անցյալ տարվա ընթացքում 17 հազարից բարձրացել է 37 հազարի: Կոլտնտեսական շինարարության գործում նկատվում են բազմաթիվ թերություններ և ուղղակի ցավոտ կողմեր: Սակայն կոլտնտեսություններն սկսել են իրենց մեջ ներգրավել վոշ միայն չքավորների, այլ և միջակների բավական աչքի ընկնող խմբեր:

Նաև սկսվել է կոլտնտեսությունների խոշորացման պրոցեսը, և ստեղծվում են խոշորագույն միավորումներ: Միությունների Միության տվյալների համաձայն, Սալիի շրջանի գյուղատնտեսական կոոպերացիաները միանալով կազմել են 31 կոլտնտեսություններ, բացի դրանից, 22 ել պատրաստված են միանալու: Դիգորի (Հյուսիսային Ոսեթիա) գյուղատնտեսական կոլեկտիվ-կոմբինատն ընդգրկում է 15 հազար հեկտար տարածություն: Սլավ-Գորոդի շրջանում կազմակերպված «Տրետիյ Խնտերնացիոնալ» կոմմունան ընդգրկում է 13 հազ. հեկտար տարածություն: Կարելի է թվել մի շարք ուրիշ խոշոր կոմմունաներ և կոլտնտեսությունների միավորումներ, վորոնք ընդգրկում են 2—3 հազար հեկտար տարածություն: Նույն Միությունների Միության տվյալների համաձայն, զանազան շրջաններում աշխատանք է կատարվում 22 նոր կոլտնտեսություններ կազմակերպելու 291 հազ. հեկ-

տար տարածութեամբ: Պետք է մատնանշել նաև այն փաստը, Վոր «Ուկրսովխոզը» 24 գյուղերի հետ պայմանագիր է կնքել 30 հազ. հեկտար տարածութիւն տրակտորով հերկելու համար: Ծրագրովում ե նոր պայմանագրեր կնքել ևս 15—20 ուրիշ նոր գյուղերի հետ:

Անցյալ տարի կոոպերատիվ կազմակերպութիւնները նոր աշխատանք սկսեցին տրակտորային խմբեր ստեղծելու համար, վորոնք, հողային ընկերութիւնների հետ հատուկ պայմանագրեր կնքելով, հերկում են խոշոր տարածութեամբ գյուղացիական հողեր: «Սիբբոցենտրը» և «Սելխոգոտյուզն» անցյալ տարի կազմակերպել են տրակտորային 13 խմբեր 326 տրակտորով, վորոնք մշակում են համարյա 6140 գյուղացիական տնտեսութիւնների հողերը 67.000 հեկտար տարածութեամբ: Այդ բոլորը վկայում են, վոր լայն շարքում է սկսվել դեպի կոլեկտիվ տնտեսութիւնները: Այդ տեսակետից մեծ նշանակութիւն ունի կոնտրակտացիաների ծավալվող պրակտիկան: Միայն հացահատիկների կուլտուրայի վերաբերմամբ կոնտրակտացիան 1929—30 տ. կընդգրկի 15.500.000 հեկտար տարածութիւն ու, բացի դրանից, 3.375.000 տեխնիկական կուլտուրաների ցանքեր և այլն: Այստեղ նույնպես ծավալվում է հրակայական աշխատանք, վորը նախապատրաստում է գյուղացիակոն տնտեսութեան վերակազմութիւնը կոլեկտիվիզմի բարձրագույն տեխնիկայի հիմքերի վրա: Վերջապես, զգալիորեն աճում է խորհրտնտեսութիւնների դերը: Հին խորհրտնտեսութիւնների աճմանը զուգընթաց մենք կիրառում ենք խոշոր ձեռնարկումներ հացահատիկային նոր խորհրտնտեսութիւններ ծավալելու համար, վորոնց դերը հացահատիկային և ապ-

րանքային արտադրանքի համար առաջիկա տարիներում արդեն պետք է դառնա խիստ զգալի: Խորհրտնտեսութիւնների և կոլտնտեսութիւնների տեսակարար կշիռը գյուղատնտեսական և ապրանքային արտադրանքում, նախնական հաշվով, կազմում է 9,3 տոկոս, վորը գերազանցում է անցյալ տարվա տեսակարար կշռին:

Մենք արել ենք միայն ամենաառաջին քայլերը սոցիալիստական դիրքերը գյուղատնտեսական արտադրութեան մեջ ամրացնելու գործում, սակայն սոցիալիստական հողագործութեան այդ առաջին քայլերի նշանակութիւնը մեծ է: Այժմ, յերբ վերականգնման շրջանը գյուղատնտեսութեան մեջ ավարտվել է, առանձնապես սուր կերպով է գրված գյուղացիական տնտեսութեան զարգացման ուղիների հարցը: Գյուղացիական տնտեսութիւնն ունի զարգացման միայն չերկու ուղի, — նրանցից մեկը կապիտալիզմի ուղին է՝ կուլակութեան ամրացման և աշխատավոր գյուղացիութեան հիմնական մասսայի քայքայման ուղին: Այդ ուղիով չի կարող գնալ Խորհրդային Հանրապետութեան գյուղացիական տնտեսութիւնը: Գյուղատնտեսութեան վերելքի մյուս ուղին կարող է լինել միայն այն ուղին, վորը համազոր է գյուղացիական տնտեսութիւնների անցմանը դեպի խոշոր կոլեկտիվ արտադրութիւն՝ բարձրագույն տեխնիկայի հիման վրա:

Այդ՝ գյուղացիական տնտեսութեան սոցիալիստական աստիճանական վերակազմութեան ուղին է, վորը պահանջում է ավելի ու ավելի լայն մասշտաբով գործադրել բարդ մեքենաներ, տրակտորներ, ելեկտրիֆիկացիա և այլն: Գյուղացիական տնտեսութեան արտա-

դրական ուժերի զարգացման գործում ուրիշ ուղիներ լինել չեն կարող:

Ներկայումս, չորս առանձնապես զգացվում է գյուղատնտեսության հետաձայնացությունը և նրա զարգացման չափազանց դանդաղ տեմպը, Սորհրդային Միության բանվոր դասակարգի առջև իր ամբողջ սրությամբ ծառանում է գյուղացիական տնտեսության այդ չերկրորդ—սոցիալիստական ուղիի համար պաշարելու հարցը: Դեպի այդ ուղին առաջ շարժվելու համար այժմ անհրաժեշտ է շաղկապի նախկին ձևերը (ապրանքաշրջանառություն կոոպերացում և այլն) առանձին կերպ զարգացնելու հետ զուգընթաց, բոլոր միջոցներով ամրացնել արդյունաբերության և գյուղատնտեսության շաղկապի նոր ձևերը և բանվոր դասակարգի ու գյուղացիության շաղկապի նոր ձևերը: Շաղկապի այդ նոր ձևերը—կոլ-տնտեսությունները, խորհրդատնտեսությունները, տրակտորային խմբերը և կոնտրակտացիայի մեթոդներն են: Մինչև այժմ մեր գյուղատնտեսական կոոպերացիան քիչ ուշադրություն է դարձրել արտադրական խնդիրներին: Այժմ այդ ասպարեզն է փոխադրվում նրա գլխավոր աշխատանքը: Այդ նշանակում է, վոր գյուղացիական տնտեսության համար պետք է սկսվի նոր շրջան—վերակազմության շրջան: Կոոպերացիայի բոլոր տեսակների զարգացումը գյուղում, հատկապես արտադրական կոոպերացման զարգացումը—ահա թե ինչը կամրացնի սոցիալիստական քաղաքի և չքավոր-միջակ գյուղի շաղկապի նոր ձևերը: Գյուղացիական անհատական տնտեսությունների վերելքի խնդիրները զուգորդել շաղկապի նոր ձևերի ավելի ու ավելի ամ-

րացման գործի հետ,—նոր ձևեր, վորոնք ապահովում են մասսայական գյուղացիական տնտեսությունների վերակազմությունը բարձրագույն տեխնիկայի և կոլեկտիվիզմի հիմունքների վրա,—ահավասիկ սրանք են ներկա ժամանակաշրջանի խնդիրները: Զուգորդել այդ չերկու խնդիրներն անհրաժեշտ է ինչպես սոցիալիզմի հիմնական խնդիրների շահերի տեսակետից, նույնպես և անմիջականորեն, գյուղացիական մասսաների գրություններ իրապես բարելավելու տեսակետից: 15-րդ կուսհամագումարի վորոշումները գյուղի վերաբերմամբ բացարձակապես ճիշտ դուրս չեկան, ըստ վորում մասսայական աշխատանքի ծավալման և այդ վորոշումների իրագործման վրա այժմ պետք է կենտրոնացվեն բանվոր դասակարգի մաքսիմում ջանքերը: (Մափահառություններ):

ԴԵՍԵՆՈՐԳՆՈՒՄ ՊԵՏՎԵՐԻ ՍՐՄԱՆ ՄԵՍԻՆ

Յես համառոտակի կանգ կառնեմ մեր քաղաքական դրության գնահատականի վրա: Յերկրի քաղաքական դրության գնահատականն անելիս յես պետք է շոշափեմ բանվոր դասակարգի և գյուղացիության շրջանում գոյություն ունեցող քաղաքական տրամադրությունները և դասակարգային պայքարի սրման հարցը: Բանվոր դասակարգի քաղաքական տրամադրությունների մասին խոսող փաստերը բավականաչափ հատկանշական են: Վերցնենք կոլեկտիվ պաշտանագրերի կամպանիան: Նա անցավ բանվորական լայն մասսաների բացահայտ պաշտպանություն պայմաններում: Վորոշ շրջաններում տեղի ունեցող տրոց-

կիստները այն փորձերը, — վորոնց նպատակն եր վիժեցնել կողքիկով պայմանագրերի կամպանիան, — ամենուրեք մատնվեցին կատարյալ պարտութեան: Բանվոր դասակարգի կողմից դեպի խորհրդային իշխանութունը ցուց տված վերաբերմունքի մի ուրիշ որինակ ել ինդուստրիացման 2-րդ փոխառութեան իրացումն ե: Հայտնի յե, վոր բանվորները խանդավառութեամբ արձագանգեցին խորհրդային կառավարութեան համապատասխան դիմումներին, և փոխառութեան բաժնեգրումը գերազանցեց նախնական չենթադրութեանները: Այժմ մենք պետք ե ձեռնարկումներ կիրառենք բանվորներին մթերքներ մատակարարելու գործը նոր ձևով կազմակերպելու համար:

Նպատակ ունենալով բանվորական ռաշոններն ապահովել հացով և թուլ չտալ, վոր հացն սպեկուլացիայի թուարկա դառնա ու վաճառվի անասունների կերի համար, այժմ մենք սկսել ենք անցնել բանվորական բոլոր ռաշոններին կազմակերպված ձևով հաց մատակարարելու ձևին: Խորհրդային իշխանութեան համապատասխան ձեռնարկումները, ինչպես այժմ պարզվում ե, միանշտմայն պաշտպանութուն են գտնում բանվորների կողմից:

Վերջապես վերցնենք խորհուրդների վերընտրութիւնները: Դրա համար կիրառված ամբողջ կամպանիան վկայում ե այն մասին, վոր բանվորական մասսաներում նկատվում ե ակտիվութեան աճում ու ընտրական ժողովների հաճախումների ուժեղացում և այլն: Բոլոր այս փաստերը վկայում են, վոր խորհրդային իշխանութիւնը հենված ե բանվոր դասակարգի ամենալայն մասսաների անդրգնակ պաշտպանութեան վրա:

Ինչ վերաբերում ե գյուղին, պետք ե ասել, վոր այստեղ պրոլետարիատի դիրքն ամրացել ե: Հայտնի յե, վոր անցյալ տարի ամառը մինչև իսկ կոմունիստների շրջանում չերեմն ճառեր ելին լավում այն մասին, թե իբր խզվել ե շաղկապը գյուղացիութեան հետ: Պանիկյորներին պատասխան տվին, մասնավորապես, վերջին ընտրութիւնները: Խորհուրդների վերընտրութիւնների վերաբերյալ մեր ունեցած տվյալները վկայում են գյուղացիական մասսաների ակտիվութեան զգալի աճման մասին: Բարձրացել ե չքավորների ու բաւարակների, նաև կոմունիստների տոկոսը խորհուրդներում: Վորոշ տեղերում, սակայն, բավականաչափ ուշադրութիւն չի դարձվում չքավոր խավին գյուղխորհուրդների աշխատանքի ասպարեզ քաշելու գործին: Միաժամանակ չերկրում առաջ ե չեկել դասակարգային պայքարի սրում՝ տնտեսութեան մեջ սոցիալիստական տարրերի դերի ուժեղացման հետեանքով, վորը կապված ե կապիտալիստական տարրերին նախկին դիրքերից ավելի ու ավելի ուժեղ կերպով դուրս մղելու հետ:

Սոցիալիստական պետութեան հարձակմանը կուլակութիւնը պտտասխանեց իր դիմադրութեան ուժեղացումով: Դասակարգային պայքարի սրման մասին վկայում են, որինակ՝ կուլակային տերրորի աճումը, խորհուրդների և կուսակցութեան աշխատավորների վրա կատարված հարձակման փաստերը, հրկիզումները դեպքերի շատանալը կոլտնտեսութիւններում ու խորհուրդներում խորհուրդներում և այլն: Այդ փաստերը բավականաչափ ապացուց են, վոր դասակարգային պայքարը սրվել ե գյուղում:

Այս տարվա հացամթերման կամպանիայի ընթացքում նույնպես շարունակվում են կուլակություն փորձերը, վորոնց նպատակն է—վիժեցնել խորհրդային իշխանությունն ձեռնարկումներն ու ծրագրերը: Դադարում նույնպես նկատվում է դասակարգային պայքարի սրում: Շախտիի գործը վկայում է այն մասին, վոր բուրժուական հակահեղափոխությունը պայքարի նոր մեթոդներ է գործադրում պրոլետարիատի դիկտատուրայի դեմ, ձգտելով խախտել սոցիալիստական շինարարության հիմունքները:

Իդեոլոգիական ճակատի դանազան մասերում նույնպես վերջին ժամանակներս նկատվում են հարձակման փորձեր, — պրոլետարիատի դիկտատուրայի դեմ ուղղված ակնհայտ և կիսաակնհայտ հարձակման փորձեր: Այդ տրամադրություններն իմիջի ալլոց, անդրադարձան Գիտությունների Ակադեմիայի ընտրությունների ժամանակ: Գրականության մեջ և թատրոնում սկսեց ծայր տալ բուրժուական, հակախորհրդային տեսակետների առավել անսքող պաշտպանությունը: Սակայն, մյուս կողմից, դասակարգային պայքարի սրումն առաջ է բերում ավելի ուժեղ շերտավորում ինտելիգենցիայի շրջանում, վորտեղ առաջ է բերում վորոշակի բեկում հոգուտ սոցիալիստական շինարարության: Վորոշ չափով սիմպոտումտիկ է նաբոդնիկ պրոֆեսսոր Չելինցևի ու Չալանովի լեկույթը, նրանք հրաժարվում են գյուղացիական անհատական տնտեսությունները պաշտպանելու հին նարոդնիկյան տեսակետներից և ընդունում են, թեև կիսատապալտ ու վոչ ամենևին բավարար չափով, վոր ձիշտ են սոցիալիստական շինարարության ուղիները հողագործության ասպարիզում:

Անցյալ տարի, չերբ գրականություն ասպարիզի միջանի ուղեկիցներ անցան ուսկցիոն դիրքերի վրա, տեղի ունեցան մի շարք վատեր, վորոնք վկայում են, վոր ուղեկիցների մյուս մասը վորոշ չափով ձախացել է: Հարկավոր է նույնպես արձանագրել ուժերի աճումը պրոլետարական գրականության մեջ, ինչպես և մարքսիստական գիտական աշխատավորների կազմակերպվածության ուժեղացումը (որինակ՝ սլատմաբան-մարքսիստների համագումարը և այլն):

Վերջապես անցնենք պետական ապարատի հարցին: Բանվորների քաղաքական ակտիվության աճումն իր արտահայտությունն է գտնում խորհուրդների վերընտրությունների կամպանիայում: Միաժամանակ, պետական ապարատի բարելավման հարցն ալժմ, հատկապես, հրատապ բնույթ է ստացել: Ինքնաքննադատության լուղունգը թափ տվեց լայն մասսաներին և բանվորներին նոր շերտերվորտքի հանեց պետական ապարատում գոյություն ունեցող բյուրոկրատիզմի դեմ պայքարելու համար: Ինքնաքննադատության ծավալման վերաբերյալ Կենտկոմի հուլիսյան պլենումի դիմումով, կուսակցությունը բանվորների ու ամբողջ աշխատավոր մասսաների հատուկ ուշադրությունը բեռնեց պետորդանների աշխատանքն ստուգելու, պետական ապարատն անհարազատ տարրից մաքրելու և նրա աշխատանքի մեջ բանվորների նոր խավեր ներգրավելու գործի վրա:

Պետական ապարատում նկատվող բյուրոկրատիզմի դեմ իսկական լայն պայքար մղելու գործը մենք դեռևս նոր պետք է դնենք ինչպես հարկն է: Այդ հարցը, վորպես հատուկ կետ՝ Կենտկոմն առաջադրեց մերտ-Մոլոտով — 2

ցընել առաջիկա Համամիութենական կուսկոնֆերենցիայի որակարգի մեջ: Պետք է կարծել, վոր կոնֆերենցիան հետագա մղումը կտա այն պայքարի գործին, վորը նպատակն է՝ բարելավել պետական ապարատը, պետորգանների աշխատանքում նկատվող բյուրոկրատական ալլանդակությունները, առաջ քաշել բանվորների նոր կազմեր, ավելի լայն չափով կիրառել պետապարատի աշխատավորների ընտրության սկզբունքը և այլն: Այդ առթիվ, ավելի ևս սուր կերպով և դրված կուստորակա աշխատանքը բանվորական և գյուղացիական մասսաներում ծավալելու խնդիրը:

Մասնավորապես պետք է մատնանշել, վոր ձևափոխությունների մի մասում 7-ժամյա բանվորական ու մտցնելն այնքան էլ չի ոգտագործվել բանվորների ու բանվորուհիների շրջանում կուլտ-կրթական աշխատանք ծավալելու համար: Մինչդեռ լերկրում դասակարգային պայքարի սրման պայմաններում պետապարատի բարելավումը և մաքրումը, մասսաների մասնակցության ուժեղացումը պետական որգանների աշխատանքում և նրանց մեջ պրոլետարական նոր կազմեր առաջ քաշելը—քաղաքական հակայական կարեւորություն ունեցող մի խնդիր է:

ԿՈՒՍԱԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՊԵՅՋԱՐԸ ԲԱՏԼՈՆԻԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԺԻ ՀԱՄԱՐ

Կուսակցության 15-րդ համագումարն ի մի գուժարեց տրոցկիզմի դեմ մղվող պայքարի հիմնական արդյունքները: Կուսակցությունը գտավ, վոր տրոցկիստական իդեոլոգիան անհամադրելի չէ բալլետիկյան

